

## **ՀՀ գյուղատնտեսության նախարարն այցելել է Արագածոտնի մարզի ագրովերամշակման ոլորտի մի շարք ընկերություններ**

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն այսօր աշխատանքային այցով Արագածոտնի մարզում էր՝ ագրովերամշակման ոլորտի մի շարք ընկերությունների գործունեությանը ծանոթանալու նպատակով: Նախարարին ուղեկցում էին Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանը և «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ տնօրեն Գագիկ Խաչատրյանը:

Այցը մեկնարկել է Ցամաքասար համայնքում գործող «Աստղ կաթնամթերքների արտադրության» սպառողական կոոպերատիվից, որի նախագահ Սոս Սարոյանը տեղեկացրել է, որ 32 անդամից բաղկացած կոոպերատիվը զբաղվում է անասնապահությամբ, բուսաբուծությամբ, ինչպես նաև կաթի հավաքմամբ, սառնարանային պահպանությամբ և վերամշակմամբ: Կոոպերատիվում կաթի վերամշակման հզորությունը կազմում է տարեկան շուրջ 400 տոննա: 2015 թվականին այստեղ արտադրվել է շուրջ 7 հազար կգ պանիր, 900 կգ կարագ: Նա նաև նշել է, որ 2015 թվականից «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակի» դրամաշնորհների միջոցով ձեռք են բերվել պանրի արտադրության սարքավորումներ, որոնք թույլ են տվել կոոպերատիվում նախաձեռնել պանրի արտադրություն: Ներկայումս այստեղ արտադրվում են «Լոռի», «Սուլուգունի» և «Ռոքֆոր» պանրատեսակներ, որոնք իրացվում են տեղական շուկայում: Առաջիկայում նախատեսվում է պանրի իրացման նոր շուկաներ մուտք գործելու շնորհիվ ավելացնել մթերվող կաթի և թողարկվող արտադրանքի ծավալները:

Այցի ընթացքում նախարարը եւ մարզպետը եղել են նաև Սասունիկ համայնքում տեղակայված գինեգործական «Վան Արդի»ՍՊԸ-ում, որտեղ 9 հեկտարի վրա հիմնականում մշակվում են խաղողի տեղական սորտեր, յուրաքանչյուր հեկտարից տարեկան ստացվում է միջինը 8-10 տոննա բերք: Ընկերությունն արտադրում է չոր, անապակ սպիտակ, վարդագույն և կարմիր գինիներ: Այժմ ընթացքի մեջ են խաղողի այգում կաթիլային ոռոգման համակարգի ներդրման աշխատանքները: Ընկերության արտադրական հզորությունը կազմում է տարեկան մոտ 50 հազ. շիշ գինի:

Արտադրանքի գերակշիռ մասն արտահանվում է Ռուսաստան, Նիդերլանդներ և Բելգիա: Առայժմ քիչ քանակներով արտահանվել է նաև Անգլիա և Ֆրանսիա, իսկ մինչև տարվա վերջ կարտահանվի ևս երեք նոր շուկաներ: Ընկերությունը հիմնում

է խաղողի նոր այգիներ, որի շնորհիվ կավելանան ինչպես գինու արտադրության, այնպես էլ՝ արտահանման ծավալները:

Գյուղատնտեսության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի և բեղմնավոր աշխատանքի համար նախարար Սերգո Կարապետյանն ընկերության հիմնադիր Վարուժան Մուրադյանին պարգևատրել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության ոսկե մեդալով:

Վերջին կանգառն Աշտարակում էր, որտեղ կատարվել է այցելություն «Փի ընդ Դի Գրուպ» ՍՊԸ, որը հայտնի է «Գուրմէ Դուրմէ» ապրանքանիշով շոկոլադի արտադրությամբ: Ընկերությունը ստեղծվել է 2007թ. հայրենադարձ եղբայրներ Պիեռ և Դիրան Բաղդադյանների կողմից: Ներկայացնելով իրենց արտադրանքը՝ Պիեռ Բաղդադյանն ընդգծել է, որ ընկերության արտադրանքի մեծ պահանջարկը պայմանավորված է առաջին հերթին Եվրոպայից ներկրվող հումքի բարձր որակով, բացի այդ ամբողջությամբ ձեռքի աշխատանք է: Նա հավելել է, որ առաջիկայում նախատեսվում է շահագործման հանձնել նոր արտադրամաս, որի շնորհիվ կավելանան շոկոլադի արտադրության ծավալները, ինչը թույլ կտա կազմակերպել նաև արտահանման գործընթացը դեպի Ռուսաստան:

Ընկերության հիմնադիր Պիեռ Բաղդադյանը ևս պարգևատրվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի ոսկե մեդալով: